ԿԿԱՅԱՆԱ «ՓԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ. ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ» 12-ՐԴ ԱՄԵՆԱՄՅԱ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

13.07.2023 17:43

ՀՀ փաստաբանների պալատը, ՀՀ փաստաբանական ակադեմիան և Իրավաբանների հայկական ասոցիացիան կազմակերպել են «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» 12-րդ ամենամյա հանրապետական գիտաժողովը՝ «Փաստաբանի անկախությունը» խորագրով:

Վաղը՝ հուլիսի 14-ին, ժամը 10:00-ին Փաստաբանների պալատում (Զաքյան 7-2), կկայանա գիտաժողովի բանավոր՝ ամփոփիչ փուլը: Գիտաժողովին ներկա կլինեն Փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանը, Փաստաբանական ակադեմիայի ռեկտոր Արա Զոհրաբյանը և Իրավաբանների հայկական ասոցիացիայի նախագահ Կարեն Զադոյանը:

Ժամը 09:45-10:00-ն բանախոսները կպատասխանեն լրագրողների հարցերին:

Հավելենք, որ գիտաժողովի մասնակիցները ՀՀ բուհերի իրավաբանական ֆակուլտետների և քոլեջների իրավաբանական բաժինների ուսանողներն են:

Միջոցառմանը գիտաժողովի մասնակիցները կներկայացնեն իրենց զեկույցները, կհայտարարվեն մրցույթի հաղթողները, կհանձնվեն նախատեսված մրցանակները:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })